

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

29.12.2020

ԿԲ խորհրդի նիստում

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի դեկտեմբերի 29-ի նիստում գրանցվել և լիցենզավորվել է «ՕԿ Կրեդիտ» ՈւՎԿ ՍՊԸ-ն: «ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈւՎԿ ՓԲԸ-ին տրվել է լուծարման թույլտվություն, ուժը կորցրած է ճանաչվել վերջինիս վարկային գործունեության թիվ 21 լիցենզիան:

Վերաձևակերպվել են «Քրեսնթ Գլոբլ Եվրասիա» ՓԲԸ ապահովագրական բրոքերային գործունեության և «Վերոյան Քեփիթըլ մենեջմենթ» ՍՊԸ-ի ներդումային ծառայությունների մատուցման թիվ 0017 լիցենզիաները: Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել «ԼԱՏՏԵ» ՍՊԸ-ին:

Ուժը կորցրած են ճանաչվել «ՊԼԱՏԻՆ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 827, «ՓԻ.ԷՍ.ԱՌ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 712 և «ԹՐԱՍԹ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ-ի գրավատնային գործունեության թիվ ԳԳ-Ե 279 լիցենզիաները:

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Հաճախորդների բողոքների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պայմանները և սկզբունքները» կանոնակարգ 8/04-ում, «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ում, «Ավանդատուներին ավանդների հատուցման երաշխավորման պայմանների եւ կարգի մասին հանձնվող ծանուցման օրինակելի ձեւ»-ում և «Բանկերի կողմից ավանդների եւ ավանդատունների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման, երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկման եւ ՀՀ ԿԲ-ին տրամադրման կարգ»-ում:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

հեռ/ֆաքս. (010) 56 37 61

էլ-փոստ. mcba@cba.am

www.cba.am